

1890

# ԲԱԶՄԱՎԵՊ

## ՀԱՇԹԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՒԹՅՈՒՆ ՀՈԿԱՅՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ

### ՀԱՅ-ՎԵՆԵՏ

(Տիկ յէջ 305)



Թի լրկ աւանդութիւնն այսչափ հեռու կարող է տանիլ զշայն, մըշափ ևս առաւել կրնայ յափշտակել զվենեսոն իր հոյակապ գործոց, արձանաց և շինուածոց յիշատակաւ, աշքին առջև բերելով զաւարառուն յադ թող, զպանժալին ի շարս հարիւր և քսան տոժերու՝ զեծն ենրիկ Տանտոլյ... բայց և Հայոյն թոյլ պիտի տայ անշուշտ մասնակից ըլլալ իրենի մեծարանս այս անձին. վասն զի իրմով կը սկսի այն սերտ և ստոյգ կապակցութիւնն երկուց ազգաց և պետութեանց, հայկականին և վենետիկան. և եթէ ներելի է ըսել, Տանտոլյ և Լեւոն Ռուբինեան՝ երկու գարուց միջոցին մէջ կրկին զլուխք կրնան սեպուիլ իրենց կցորդութեան կամըրջին, ուզզակի և անուղղակի կերպով՝ իրենց ժամանակէն մինչեւ հիմայ:

ինչպէս տեսանք. այս երկու ազգաց փոխադարձ ծանօթութիւնն շատ հին ժամանակաց ի վեր սկսած էր, և հետզհետէ պայծառացած երկոտասաներորդ գարու մէջ, վենետիացի վաճառականաց յարևելս յաճախելուն պատճառու, և ի Կիլիկիա՝ հայկական իշխանութեան մը հաստատուելովը, և քիչ յառաջ սկսելով քան զգ-զրդել իսաշակրաց յԱսորիս, որ Կիլիկիայ ուրացի աշխարհ մը կրնայ սեպուիլ, և

22

դար մի ամբողջ տատանելով մերթ հզօր ու յաջող, և մերթ տկար ու անյաջող բաղցիւ, երկոտասաներորդ դարու վերջերը հանդիսա, կան կերպով հաստատուեցաւ ու գորացաւ՝ մեծագործն և քաջին լեւոնի թագուորութեամբ. որ ոչ միայն Ենրիկոսի՝ այլ նաև ընդ ամենայն նշանաւոր իշխողս և զօրավարս ժամանակին կրնայ մրցիլ, առանց մէկէ մը յետնելու, նոյն դարու մէջ, և իր հօրը ժամանակին, յառաջագէմքն վենետք՝ որոց չէր պակսէր ոչ քաջութիւն և ոչ աշխարհաշինութիւն, իտալիոյ ուրիշ զանառական հասարակապետութեանց հետ մտեր ու հետազօտեր էին զնորն Հայոստան, զիկիփիա, (որոյ պետք իշխողը յերանց կամ Լեռնականք կը կոյուէին, և ի շնորհս օժանդակութեանն զոր մատուցին և աշակրաց՝ անոնցմէ կոմնք, պարոնք և մարդիզք կոչուեցան). և վաճառականական գանձարեր արտեսին բանալին քաջութեամբ ձեռք ձգեցին, Տիւրոսի երրորդ մտամին տիրապետութիւնը, որ լատինաց և բովանդակի խաչակրութեան ամուր ու ապահով ապաւէն մը եղաւ. և ո զիտէ թէ նախ անոր պարբռապաց տակ (յամի 1124) ճանշցած, հաճած ու զարմացած շրջան վենետք ընդ Հայս. երբ տեսան անոնց մէկ երեցը, զԱւետիք, (Ventura), որ իրենց մերձաւորներէն աւելի ճարտարագոյն՝ պարսպամարտ մեքենայո հնարելով դիւրացոյց քաղաքին առումը, ու երկրորդ Տրոյա մը ըրաւ զիւրոս, Հայոց և վենետաց իրարու պատահման ստուգագոյն տեղի մը.

Վենետաց վաճառական տոհմից մէջ նոյն դարուն կէսէն մինչև ըըկէս յաջորդին, նշանաւոր երեցաւ ծիրանի տոհմը, յորմէ և ճարտարք ոմանք և խոհականք վերացան և բարձրացան մինչև ի դահն դրսական լրանօթ է բազմուց թէ ինչպէս այն հոչականուն ցեղէն Սեբաստիանոս՝ դեսպանութեամբ գնաց առ կայսերն Յունաց յարնելը. ինչպէս ծանօթ է նաև իր մեծանձն առատաձեռնութիւնն և ճոխութիւնն: կ'աւանդեն թէ ոսկի հորդ մը գտած ըլլայ յԱլղինոյ, ու բաղդին յաջորդթեանը փափաքելով հաղորդ ընկել և զկարօտեալս, մեր ազգէն վենետիկ եկող աղքատաց ու պանդիստելոց համար ի բնակութիւն շնորհեր է զտարեկան հասս կալուածոց և տանց որ ի վաճառափողոցն (merceria) սրբոյն Յուլիանոսի և ի կամուքն Պարաթթէրի. յետոյ Մարկոս իր թուն՝ նմաներլով նմա, իր տուներէն մէկը պարգևեց սեփհականօրէն Հայոց ապդին. և այն ժամանակէն (1253) ցայսօր՝ վեցուկէս զարերէ ի վեր՝ Հայոց տուն կը կոյուի և իրենց ձեռքն է. յանուն Հայոց կը կոյուի և փողոցն և մերձաւոր կամուրջն, և որ յետոյ նաև Ponte dei Ferai անունը կը բրած է, ինչպէս նաև հիմայ: Թերևս Ծիանիի կտակին հաստատագոյն և աւելի ծանօթ մասն է աս, և որոյ արդիւնքն ու արդարակի՛ քիչ մը յետոյ պիտի տեսնեն ընթերցողք:

Գրեթէ նոյն ժամանակաց մէջ առաջին անգամ կը յիշատակուի

աղտաղտուկ գետին մի, վենետիկեան լճաց մէկ անկիւնը, տօմեթ կամ  
tumbe (երկայատակ կոչուած շիրիմք). ջրէն բարձր, և անբնակ կա-  
լուած մը թենեղիկտեան միանձանց, որ կը բնակէին ի մերձաւոր Ա.  
Սերվիլիսյ կղզով. ասոնցմէ գնեց զհողն Ծառքոլա անունով բարեպաշտ  
անձ մը յամի 182, ու շինեց անկելանոց ու եկեղեցի մը, որ յետոյ  
յանուն սրբոյն Ղաղարու կոչուցաւ, և վրան հինդ հարիւր տարիի  
անցնելէն ետքը բնակութիւն և կայան տրուեցաւ այլալեզու թենե-  
ղիկտեան միանձանց գաղթելոց ի տար աշխարհէ, ի Հայոց. և ցայս,  
որ եկաւոր յաջորդութեամբ կը պահեն զտեղին՝ որ յանուն իրենց  
Հիմնադրին և ազգին Առորդ Ղաղար Հայոց կամ Մխիթարեանց կը  
կոչուի յիտալացւոց, և մերթ ևս սսակապէս կղզի Հայոց կամ Հայք.

Բայց մեք փութանք զառնալ առ Ենրիկ և իւլոն, և հաշակել Հա-  
յոց և Լատինաց գրովք և գեսապանութեամբք դաշնակցութեան վա-  
ւերական սկզբնաւորութիւնը.

Ոմանք ի ծերունի հարց մերոց որ սրբոյն Մարկոսի հասարակապե-  
տութեան ատեն ապրեցան, հարցընելով քաղաքին գլխաւոր պաշտօ-  
նեաններէն ոմանց, լսեր են անոնցմէ թէ Հայոց առաջին գալուստն ի  
վենետիկ եղած ըլլայ ի սկիզբն մետասաներորդ գարու, և երկրորդն՝  
ի վեշտասաներորդին. Այս վերջնոյս կրնայ վկայել նաև առողերուս  
գրողն. վասն զի թէպէտ երեքտասաններորդ գարէն ի վեր պակաս ե-  
զած չըլլայ Հայոց երթեկեկը, այլ ի կէս վեշտասաններորդին կը յա-  
ճախէ, և ի դիւանս եկեղեցեաց քաղաքին կը նշանակուին ոչ միայն  
անոնց հաստատուն բնակութիւնք, այլ նաև ծնունդք Հայոց. ուր ա-  
ռաջինն՝ այսինքն եկաւորութիւննոցա ի մետասաններորդ գարու՝ ինձ  
զես եւս մութ է. բայց գոյցէ ի վերջ ժի դարու, առ իշխանու-  
թեամբ երկոցուն վեհիցս յիշեցելոց, և յառաջ քան զթագաւորել  
լեւոնի երր գեռ եւս Պարոն կ'անուանուէր, և արքունական թա-  
զին թեկնածու էր. որով հարկ կ'ըլլայ ենթադրել թէ քանի որ  
Ենրիկ արմելք եկած չէր, իր մէկ դեսպանին կամ նուիրակի ձևոքով  
սկզբնաւորած ըլլայ ծագումն հայ - վենետիկեան յարաբերութեանց  
արշալուսոյն, եթէ աներկրայ համարինք՝ որպէս զիսկութիւն իրին,  
այսպէս զնոյն աւանդող նաւաճերոյի խօսքը. որ կ'ըսէ թէ յամի  
1496 La signoria di Venezia acciòcchè i suoi cittadini potessero  
mercantare per tutto, mandò Messer Giacomo Badoer ambasciatore  
al re di Trebisonda, un bailo in Trebisonda, e così nell'Armenia, e  
alla Tana un consolo. Ինձ կ'երենայ թէ պատմին կը կանիւ քան  
զայս գէպս. որովհետեւ Պայլից հաստատուին ի Հայս աւելի ուշ է. ու  
իրենց հաստատութենէն ետքն ալ առջի բերան Պայլք Աքքեայ Հա-  
յաստան նստող Պայլին թոշակն ալ կը հասուցանէին. Կարե-  
լի է որ յառաջ քան զայն Պայլք Վենետաց ունեցած ըլլան իրենց  
մէկ երեսփոխանը Ռուբինեանց երկրին մէջ, ուր ի սկզբան բակա.

ւաթիւ էին իրենց քաղաքացիք քան զգենուացիս, ինչպէս կը գուշա-  
կուի լեւոնի պարզեագիրներէն առ երկոսին ազգան. յորոց լիկուրա-  
ցիք քայլ մը կանխսեցին քան զբնակիշս Ադրիականին, բայց յետոյ  
շուտով ետ կեցան: Այդ երկու ժողովուրդք, ինչպէս նաև ուրիշ պե-  
տութիւնք եւրոպականք, կարծեն թէ զարմանքով մը կը նկատէին  
զհայս՝ հին ասիական այլաղեն աղքաց և եկամուտ արևմտեան իշ-  
խանովթեանց մէջ. և կը սպասէին հաստատուն ձեռվ մը կերպաւո-  
րուած տեսնել անոնց իշխանովթիւնը կիլիկիոյ յարմարաւոր ու գի-  
պան երկրին վրայ, որ լուսորէն կը տարածէ զծոյն ի Միջերկրակա-  
նին, և կ'ամրացընէ թիկունքը յանձնատոյց պատուարս Տաւրոսի: Եւ  
ահա արիասիրտն, անխօնջ և խորագէտն լեւոն՝ տասը տարի աշխա-  
տելով, ու զէնքով և նուրբ քաղաքականութեամբ ամէն հնարք ու  
ջանք գործածելով, կ'ընդարձակէ հայրենի իշխանովթեան սահմանը,  
կ'ամրացընէ անընկնծի բերդերով, ու զինուց զօրութեամբ՝ խաչա-  
կրաց նիզակակցութեամբ և արևմտեայց հետ խնամութեամբ ահ ու  
սարսափ ձգելով թշնամեաց, Ասորոց ու Փոքուն Ասիոյ հին ու նոր  
բնակչաց աշքին առջև բարձրացցց իր թագապսակ գլուխը ի սկիզբն  
1499 տարուցն, մի և նոյն ժամանակի մէջ ընդունելով թագ ու պը-  
սակ ի կայսերաց արևելից և արևմտից և յամիրապետէն, և ի քա-  
հանայապետէն Հոռվմայ դրօշ և օրհնութիւն: Աս որ տեսան, ամէն,  
քը կամ առ շահու և կամ առ ահի, իրարմէ առաջ փուլթացան մե-  
ծարել զնա, և բարեկարգ աղքաց և պետութեանց օրինաց և սովո-  
րութեանց համեմատ դաշինք զնել հետը:

Լեւոնի թագաւորական պատկ ընդունելէն յառաջ են թղթակցու-  
թիւնք քահանայապետականք. բայց իր թագանիշ և ոսկէկնիք նա-  
մակք՝ որ կը պահուին ցարդ ի գեւանս վատահկանի, երկոտասանե-  
րորդ գարու վերջին ամին թուանից կը կրեն. անկէ ետք են աշխար-  
հական պետութեանց ու հասարակապետութեանց հետ զրուած դա-  
շինք. անանկ որ երեքտասաներորդ գարու առաջին տարին՝ առաջին  
է և այս դաշնադրութեանց. և մի ու նոյն 1204 թուականին տրուած  
և հաստատուած են դաշինք և չնորհմունք լեւոնի առ Գենուացիս յամ-  
սեանն մարտի և առ վենետոս ի զեկտեմբերի: Առ առաջինս տրուած-  
ներուն մէջ կը նշարուի, ինչպէս քիչ յառաջ ըսինք, իրենց աղքա-  
կցաց այլ աւելի ձեւական հաստատութիւնը. և կը չնոր ուի իրենց գա-  
տարան (curia) և բնակութիւն, եկեղեցի, փնտուկ ի մայրաքաղաքն  
Ռիս, ի Ցարսոն և ի Մամեստիա: իսկ վենետիկեցւոց՝ միայն Մամես-  
տիոյ մէջ կը արուի բնակութիւն, եկեղեցի և փնտուկ. սակայն դաշ-  
նագիրն աւելի երկար և մանրամատն է քան զնորհեան առ գենուա-  
ցիս: Եւ որովհետեւ հիմն կամ նախագաղափար կրնայ սեպուիլ մեղի

1 Հրատարակուած ի լամկլուայէ ի գիրսն Սարտւարէ ք լէ Chancellerie royale des  
Քուրպէտն, յէջ 109;

ծանօթ և ժամանակաւ կրտսեր ուրիշ ամէն դաշնագրոց և պարգևագրաց, աւելորդ չենք համարիր համառօտիւ նշանակել այն ամէն պայմաններն ու չնորհն զոր ոչ միայն յիւր, այլ և յանուն յաջորդացն կու տայ Ենրիկի Ցանտորոյ դքսին Վենետիկոյ, Դալմատիոյ, Խռուադաց, և քառորդ մասին կայսերութեան Յունաց, դեռ եւս Բիւզանդիոնի տիրած չըլլալով, և ամենայն Վենետաց, ըստ խնդրոյ դեսպանին Ենրիկի՝ Յակովայ Պատուիր: Եւ կը չնորհէ,

Ա. Նախ, Վենետաց պատերթեեկ իրենց ամէն ընչիւք՝ իր տէրութեան ամէն սահմաններուն և անցից մէջ:

Բ. Անդրածովու (oltremare, արևելք) բնակիչք՝ միայն բնդ պահնակ դրուն (portella,) անցած ատեննին մաքս վճարեն, հաւասար ուրիշ ամէն քրիստոնէից, Ալյոն նշանակուած տեղ՝ հիմայ Ալեքսանդրեակ կոյուած քաղաքին արևելեան եղերաց մօտ, լերանց նեղ կտապանի դուռն մ'էր, և Ասորուոց արևելից կողմանէ ի կիլիկիա անցից գլխաւոր տեղը. այն պատճառաւ հոն հաստատուած էր պետական մեծ մաքսատունն և ճոխ գանձարան, և նոյն դռնէն կըլլային ից ամանք բերուած անբար վաճառաց մուտք ելք:

Գ. Դրամահատութեան համար բերուած արծաթն և ոսկի, ինչպէս յԱքքեա, ասանկ նաև հօս՝ տրոց Ենթակայ էին. իսկ անդրամահատըն՝ ազատ էր ի տրոց: Հայոց և Վենետաց վերջին ժամանակաց յարաբերութեանց մէջ ալ (1833, մայիս) կը յիշուի Հասարակապետութեան վճիռ մը, թէ այս նաւն որ կ'երթայ ի Հայս, և արծաթոյն կէսը պիտի զնէ ի զրամատուն (zecca) թագաւորին Հայոց, անոր դեսպանէն երդումն պիտի առնու: Այս վճուէն տարի մը յառաջ ի Հայս և ի Կիպրոս արծաթ չփոխադրելու վճիռ մը տրուած էր (1832). Նոյն վճիռը կը կրնուի նաև յաջորդ 1834 տարւոյն մէջ (օգոստոս 18),

Դ. Ամենակն զասսու մը տակ չի ձգուին ոչ անձինք և ոչ ինչք Վենետաց:

Ե. Նոյնպէս և ի նաւարեկութեան. բայց թէ անոնց նաւուց մէջ օտարականք գտնուին, միջին դարուց անհեթեթ օրէնքի մը համեմատ, այս վերջնոց ինչք գուաւին յարունիս:

Զ. Եթէ անոնց առ օտարս ըրած երթեեկի ատեն՝ իր երկրին մէջ վնաս մը հասնի, հատուցումն ըլլայ յարբունուած:

Է. Վախճանեալ Վենետացւոյ մը կտակն հաստատուն ըլլայ. իսկ եթէ անկտակ մեռնի և հօն իրեն համաքաղաքցի մը գտնուի, ստացուածքն անոր տրուի: իսկ եթէ չգտնուի որ, մեռնողին քով եղած ինչք կնքուին, ու արքունի քարտուղարին (cancelliere) քով՝ որ էր արքեպիսկոպոսն Սայ, պահուին. մինչէ դքսէն կնքուած վաւերական գիր հասնի:

Ը. Իրարմէ դատուին Վենետիք՝ երբ մէջերնին խնդիր մը ըլլայ. իսկ

ի չհամաձայնիլն՝ արքեպիսկոպոսն Սոյ վճռէ անոնց դատաստանը :

Թ. Ընունցմէ գործուած սպանութեան յանցանք մը՝ թէ առ աղ-  
գայինս և թէ առ օտարոս, արժանապէս դատուի :

Ժ. Նյոնպէս եթէ այլ և այլ վէճք կամ կոհիք ըլլան վենետաց  
ընդ օտարոս :

ԺԱ. Շնորհուի բնակութիւն քահանայի վենետաց, եկեղեցի և  
փողուկի ի Մամեստիա :

ԺԲ. Կարենան բնակիլ ուր որ ուղենան, թագաւորութեան եր-  
կրին մէջ :

Ա.յա յետին երկու պայմաններուն առաջնովը կը յայտնուի թէ  
թագաւորն ինքն ձրիաբար կը չնորհէր անոնց բնակութեան տեղի ի  
Մամեստիա . իսկ եթէ անկէ զուրս ուրիշ տեղուանք ուղենան բնա-  
կիլ ազատ էին անձամբ և իրենց դրամով հայթհայթելով. որով կը  
գուշակուի թէ առաջ գենուացւոց նման զանազան քաղաքաց մէջ ցը-  
րուած չէին վենետք, այլ միայն ի Մամեստիա . ուր կը թուի թէ պզտի  
նաւերով կու գային վաճառականք ընդ Զահան գետ, և անտի ցամաքի  
վրայէն կարաւանօք կ'երթային յարենելակողմն և կամ ի հիւսիս, վա-  
ճառականութեան գործածական ու վարուն ճանապարհօք, ի մեծա-  
մեծ շահաստանս ժամանակին . և առ այս՝ յարմարագոյն էր Մամես-  
տիոյ զիրքը քան զՃարսոնի, որ ինչպէս ի հնումն՝ նյոն տաենն ալ  
կիրիկոյ զլիսաւոր նաւահանգիստն էր՝ ծովոն քով, բայց հեռու մը-  
նացեալ վաճառականութեան ցամաքային ճամբաներէն . բայց քիչ ա-  
տենէն թէ ցարան և թէ Մամեստիա իրենց նախկին փայլն ու կա-  
րեսորութիւնը կորուսին, երբ Ա.յաս կերպով մը իր մէջ կեդրոնացուց  
ոչ միայն կիրիկոյ վաճառականութիւնը, այլ նաև երկիրը բովանդակ  
կամ անոր վաճառականութեան մեծ մասը, ինչպէս պիտի տեսնենք :

Տասնըհինգ տարի վրան անցնելէն ետքը (1215) նորոգեց լե-  
սոն, - չեմ ուզեր աստէն քննել թէ ի՞նչ պատճառաւ, - առ գենուա-  
ցիս տուած Պարզկազիրը<sup>1</sup>. բայց Վենետացը կ'երկնայ թէ անփոփխ  
մնացեր է քառասունեհինգ տարուան միջոց . 1245 ին գուքսն Յա-  
կոր թիէփոխոյ՝ իր Պետրոս Տանտոլոյ գեսպանին ձեռքով ուղեց լեւոնի  
պարզկազիրը վերահաստատել, գլելով առ չեթում<sup>2</sup> որ չէր ի բուն  
Ռուբինեանց, այլ ազնուաբոյն ուրիշ տահմի սերունդ (չեթմեանց), և  
քսան տարիներէ ի վեր կը թագաւորէր (1226), կոստանդին մեծ իշ-  
խանին՝ իր հօրը ճարտարութեամբ, ամուսնանալով ընդ Զապելի՝  
միակ գտներ օրինաւոր ժառանգին մեծին լեւոնի, անոր ձեռքին  
հետ տէր ըլլալով նաև արքունական գահուն, և որոյ պաշտպան էր  
խորագէտ և ահարկու ծերունի թագաւորահայրն քառասուն տարի  
ամբողջ . չեթում<sup>3</sup> իր և թագուհուոյն անուամբը շնորհեց կամ կրկին

1 Cartulaire. J'tz 143:

Հաստատեց Վենետիկ տրուած երկրորդ ծանօթ Պարգևագիրը յամ սեանն մարտի . որոյ մէջ ։ անի մը նոր պայմանք կամ չնորհք աւելց ցած են . ինչպէս, Վենետիկ մէջ վէճ մը ծագած ատեն՝ իրաւարարքն յարքունուստ առհմանուին . ու երբ իրաւախոհութիւնն անկարելի ըլլայ , այն ատեն Սոյո արքեպիսկոպոսն իրենց զատաստանը տեսնէ և վճաէ . նոյնպէս, անժառանդ Վենետիկ վախճանելց համար բաւական սեպուիթ թագաւորական վճիռը, առանց դքսին կամ Աքքեայի Պայլին թղթոց սպասելու :

Տանուվեց տարիէ ետքը Ծանիերոյ Ծէնոյ դքսին խնդրանօք ու իր Յովհաննէս Ծէնոյ գեսպանին ձեռոք՝ Հեթումնորոգեց Պարգևագիրը յամի 1264 յամսեանն նոյեմբերի, Թորոս վարդապետին ձեռքով, ու վաւերացընելով Յովհաննէս անուն քահանայի մը ստորագրութեամբ, որ Վենետիկ նօտար էր յԱքքեա : Պայմաններն առաջնոյն մէջ նշանակուածին նման ու համաձայն են . միայն ասոր մէջ փոխանակ Մամեստիոյ՝ կու տայ անոնց իշխանութիւն և թոյլ ի Սիս մայրաբաղաքի հաստատել իրենց բնակութիւնը և փնդուկ ունենալ հօն . և որ աւելի արժանաւորն է նշանակութեաննաե յԱյաս քաղաքի, եւ արդ Իական տական առաջ այլ անուանակոչութեամբ . ինչպէս Այածօ, Layazzo, Giazzo, Iacia, և եթէ ոչ առաջին վաճառաշահ քաղաք ի վերայ երկրի, բայց և ոչ մէկու մը երկրորդ, որոյ վերայ մարթէ յերկարագոյն գրել, ինչպէս գրուած է յայլոց և այդ գրուածներէն կը գուշակուի կամ կը կարծուի, թէ Եղէսա (Egea) քաղաքին՝ ինչպէս կը կոչուէր ի հնուան՝ աւերակաց վրայ կառուցուած և նոր քաղաք մը բարձրացած ըլլայ, և ի կէս երկրտասաններորդ գարու՝ Հեթմոյ տուած երկու Պարգեւազրաց եղած միջոց ժամանակին՝ անքոյթ և յաջողակ նաւահանգիստ մը դարձած էր : Հեթմոյ այս պարգեւագիրը առ Վենետիկ կարծեմ որ մինչև հիմայ քննուած ու հրատարակուած չէր, որով և այսպան հին թուական ունեցող Այասայ անունը յայտնի չէր . և այն՝ Հեթմոյ հրովարտուկին լատին թարգմանութեան մէջ, որուն ոսկէկնիք հայ բնագիրը՝ Հայոց թագաւորական քարտուզար Թորոս եպիսկոպոսիթ թարգմանութեանն հետ տեսաւ նօտարն . որ և Վենետիկեան դքսական գիւտնաց ուրիշ արքունի բնագրաց հետ հրոյնարակ եղած է անշուշտ . բայց բարեբաղդաբար օրինակք և կրկնագրութիւնք պահուած են և կը պահուին ցարդ ի դիւանատան քաղաքիս Վենետիկոյ :

Երբ այսպէս հայկական նաւահանգիստն Այասայ բացուեցաւ համաշխարհական վաճառականութեան, հարկ էր այսուհետեւ հաս-

տատել յայնմ քաղաքի և Պայլի գիմաց վեհետկոյ, ուր Հասարակա-  
պետութեան հպատակը խուռն կը գիմէին իրենց նաւերով (galea),  
և յարևելից կու գային ընդ ցամաք . կը յիշատակուի նախ յառա-  
ջին Պարզեազրին՝ յետ առաջնոյն, ինչպէս նշանակեցինք, (և զոր յամի  
1271 առւաւ լեւոն թ որդի նոր վախճանելոյն Հեթմոյ (28 հոկտ.  
1270), զոր և սուրբ կը կոչէ<sup>1</sup>. և էր արդարի սրբակրօն՝ միանձնա-  
զգեստ բարեպաշտ, աստուածահամոյ կենաց ընթացքը կնքելով ի մե-  
նաստանի) . Այս Պարզեազրին պատճէնը ի փրանկ լեզու թարգմա-  
նեալ է ի Ժողովուա (Jeoffroy) արքունի թարգմանէ, և ի խնդրոյ Լո-  
րէնցոյ Թիէփողյ զեսի յանձնուած առ դեսպանն Փանկրացից Մալի-  
բիէրոյ, և այս Պարզեազրին մէջ նախ և ստէպ կը յիշուի Պայլն ի  
Հայու իսկ վեհետկոյ գիւտանաց մէջ ինձ ծանօթ եղածը՝ երեկ տարի  
յետոյ շնորհուած է (1274, օգոստոս 14) ի վճիռս Քառամնիք ժողո-  
վոյն, և առաջին կ'երենայ ի շարս նման Պարզեազրաց. որովհե-  
տեւ այսպիսի սկզբնաւորութիւն մը ունի . Incipiunt consilia Bajulo  
Armenie pertinentia. որով Կ'օրինազրէ Հայաստան գտնուող Պայլին  
իր խորհրդականաց երեքին երկու մասին խորհրդոյ համաձայնուա-  
թեամբ՝ Հայաստանէն բամբակի գնման օրէնքը սահմանել: Քանի մը  
տարի յետոյ (1279, յունիս 15) կը պատուիրէ նոյն ատեանն Քառա-  
մնիք՝ իր պաշտօնակցաց հետ կրկին ընտրութեամբ վերահաստատել  
ի պայտամանն զՊայլն Հայոց: 1282ին ալ յ' 30 յուլիսի կը վճաէ  
Ատեանն մեծ՝ որ Հայոց Պայլին թոշակը հաւասար ըլլայ Աքքեայի Պայ-  
լին տրուածին, և չափն ալ կը սահմանէ քանի մը օր ետքը ուրիշ  
վճռով մը (8 օգոստոս) 400 բիզանդ դրամ. զոր քանի մը տարի ետ-  
քը կը յաւելու մինչև ի 600 բիզանդ<sup>2</sup>:

### Եարունակելի

1 Cartulaire, j'էջ 151...

2 Նոյն ատեամբ յամախուած և ըմդամբապէս ի գործածութեամ դրամն էր «բիզամդ»  
կոչուածը, որոյ անուաթէմ կը յայտնուի ծագումը, բայց քամակը կը զամազամէր ըստ  
այլ և այլ տեղեաց որոց անուաթէմ կը կոչուէր. իմշպէս Բիզամդ սառակիթեամ, եզիպտա-  
կամ, Աքքեայ, Հայոց, Կիպրոսի, և այլն. չոս յիշուածը նաւամարար կիպրակամն էր:  
— 8Ես ի «Սիսուամ» 878:

